Որակի քաղաքականություն

«Էրեբունի» բժշկական կենտրոն

Կոդ՝ QM-PL-01

«Էրեբունի» բժշկական կենտրոնի բարձր ղեկավարությունը հաստատակամ է ապահովել առողջապահական խնամքի որակի շարունակական բարելավումը՝ բժշկական կենտրոնում և Հայաստանի Հանրապետության առողջապահական ոլորտում: Կենտրոնում մենք պարտավորվում ենք մատուցել բացառիկ առողջապահական ծառայություններ՝ առաջնահերթություն տալով պացիենտների անվտանգությանը, նրանց բավարարվածությանը և շարունակական բարելավմանը:

Մենք պարտավորվում ենք պահպանել որակի և անվտանգության ամենաբարձր չափանիշները՝ խթանելով անձնակազմի շարունակական վերապատրաստումը և մասնագիտական զարգացումը: Մեր մասնագետները հավատարիմ են վարակների կանխարգելման, ռիսկերի և վտանգների կառավարման, ինչպես նաև ապացուցողական բժշկության վրա հիմնված մոտեցումներին: «Էրեբունի» բժշկական կենտրոնում շուրջօրյա ռեժիմով ցուցաբերվում է անհետաձգելի բուժօգնություն՝ որակավորված մասնագետների կողմից:

Մեր քաղաքականությունը, գործընթացները և ծառայությունները նախագծված են պացիենտների անվտանգության, հարմարավետության և բարեկեցության համար՝ միաժամանակ հարգելով նրանց իրավունքները, արժանապատվությունը և անձնական տվյալների գաղտնիությունը: Բժշկական կենտրոնի բոլոր բաժանմունքներում բուժօգնությունը տրամադրվում է միևնույն մակարդակի վրա և առանց խտրականության:

«Էրեբունի» բժշկական կենտրոնը հավատարիմ է JCI կողմից մշակված պացիենտների անվտանգության միջազգային նպատակներին.

Նպատակ 1. Ճիշտ նույնականացնել պացիենտներին
Նպատակ 2. Բարելավել արդյունավետ հաղորդակցությունը
Նպատակ 3. Բարելավել բարձր զգայունության դեղորայքի անվտանգությունը
Նպատակ 4. Ապահովել անվտանգ վիրահատություն
Նպատակ 5. Նվազեցնել առողջապահության հետ կապված վարակների ռիսկը

Մեր կառավարման համակարգը հիմնված է որակի կառավարման ISO 9001:2015 և հավատարմագրման JCI միջազգային ստանդարտների հիման վրա՝ ապահովելով ծառայությունների համապատասխանությունը համաշխարհային չափանիշներին: Գիտակցելով նաև շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը, «Էրեբունի» բժշկական կենտրոնը պարտավորվում է շարունակաբար նվազեցնել թափոնները, ածխածնային ուղղակի և անուղղակի արտանետումները, խթանել ջրի և էներգիայի արդյունավետ օգտագործումը՝ ներդնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման մեխանիզմներ: